Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՀԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Հիվանդանոց: Կես գիշերից անց է: Հիվանդները երևի բոլորն էլ քնած են մի կերպ: Սակայն ես եմ արթուն և ակամա հսկում եմ գիշերվա ընթացքին: Տանջալի է անքուն այդ հսկումը: Մենակության ծանր զգացումը ճնշում է: Լուռ է շուրջս, հեռվից, Նորքից գալիս է Գետառի խշշոցը, այգիների սոսափը և շների խաղաղ հաչոցը:

Անցնում են ժամերը դանդաղ ինչպես դարեր: Դեռ ո՞ւր է լույսը:

Սակայն ես մենակ չեմ իրոք իմ արթնության ու անհանգստության մեջ: Հարևան սենյակից անհանգիստ ձայներ են գալիս շուտ-շուտ: Այնտեղ մի ուրիշ հիվանդ նույնպես ապրում է մի անհանգիստ արթնություն:

— Սկսել գրոհը… հետևեցեք հրետանու կրակին… գունդ, զգաստ… Պատրաստվել անցնելու ջրային սահմանը…— շարունակ այս է լսվում այնտեղից: Դա երազում խոսում է մի զինվորական: Կարելի է կարծել, որ նա արթուն է: Բայց նա քնած է: Լսելով նրա խոսքերը, որոնցով նա լցնում է հիվանդանոցի լռությունը՝ ես նկատում եմ, որ նա մինչև լույս երազում հենց այնպես կրկնում է իր անցած, դեպքերով հարուստ երեք տարին:

Ու մինչ ես ապրում եմ մի անհանգիստ արթնություն, մի տանջալի արթնություն այս քնած շրջապատի մեջ՝ իմ հարևան սենյակում զինվորականը անց է կացնում մի անհանգիստ քուն, երազում վերապրում է պատերազմը: Չենք քնած երկուսս էլ:

Այս երազի և «արթնության», անդադար «ապրելու» և «աշխատանքի» մեջ ես ակամա ուսկնդիր եմ հարևանիս կյանքի պատմության և ճանաչում, դիտում եմ նրա կյանքը, ապրումները, անխոնջ ռազմական գործը:

Այստեղ է, որ նա կենդանի պատմում է իր աղմկալի, ռազմական ծանր կյանքը, որ արթնության մեջ լռության քողով է ծածկված:

Արթնության մեջ Սովետական Միության հերոս Գեդեոն Միքայելյանը կենսուրախ, հանգիստ և հասարակ զինվորական է, որ ժպտալով խոսում է առօրյա նյութերի մասին, խաղաղ պատմում է ռազմական կյանքի բազմաթիվ դրվագների մասին, բիլիարդ է խաղում, կատակում անվրդով:

Արթնության մեջ նա բոլորովին հանգիստ և միանգամայն հասարակ մարդ է: Պատերազմը հարվածել է նրա առողջությանը, և միայն հիվանդանոցի ռեժիմը նրան ձանձրացնում է: Նեղվում է «անգործությունից», ուշքը միշտ ճակատի կողմն է, նրան քաշում է «գործը»: Ստիպված նարդի է խաղում, կարդում, թափառում պալատից-պալատ:

Սակայն գործն սկսվում է հետևյալ գիշեր, երբ մինչև լույս քնի մեջ խոսում, հրամաններ արձակում, կարգավորում է իր գունդը, հարձակվում է, կռվում: Եվ շարունակ անհանգստության, հոգսի, լարման մեջ, շարունակ հոգնեցնող արթնություն՝ աշխույժի մեջ:

Կարելի է ասել, որ նա չի քնում…

Պատերազմի հետևանքն է…

Միքայելյանը երբեք չի վիրավորվել… անհավատալի է, բայց փաստ է: Անհավատալի է, որովհետև նա մասնակցել է ամենաթեժ կռիվների, ընկել է կրակների տարափի մեջ, շրջապատման ու նահանջի ամեն տեսակ վայրիվերումների մեջ, անվրեպ մահվան, կրիտիկական մոմենտների տաժանելի կացությունների մեջ:

Ծանոթանալով նրա հետ՝ ես մի քանի օր ոչինչ չէի հարցնում այն մասին, թե ինչպես ստացավ Սովետական Միության հերոսի կոչում: Նա շատ բաներ պատմեց 1941 թվի դեպքերից… Շատ խրատական բաներ, թե՛ ուրախ, թե՛ տխուր, գլխավորը՝ այնքան իրական, որքան և հերոսական:

— Ելնյայի ճակատամարտը մի օր առանձին լույսով կպատկերացվի հայրենական պատերազմի պատմության մեջ,— ասում էր նա,— երեք օր Դնեպրը կարմիր էր հոսում թշնամու արյունից…

Պատմեց և տխուր բաներ…

— Բայց և այդ ամբողջ ժամանակը, մինչև Մոսկվա շարունակվող մեր նահանջի ամբողջ ճանապարհին ոչ ոք մեզանից չի դադարել հավատալուց, որ դա ժամանակավոր է, և մենք մի տեղ կտանք հակահարվածը: Ոչ մի տեղ, ոչ մի րոպե մեր տրամադրությունը չընկավ…

Մի օր էլ հարևանցի հարցրի հերոսին.

— Ի միջի այլոց ինչպե՞ս եղավ Միության հերոսի կոչման արժանանալու պատմությունը:

Միքայելյանը նույնքան հանգիստ և անպաճույճ, ինչպես կպատմեն Երևանից ավտոյով Սևան գնալու մասին՝ պատմեց.

— Մենք գերմանացիներին պարտության մատնելով Դնեպրի ձախ ափին՝ սեղմեցինք նրան գետին և ստիպեցինք նահանջել աջ ափը: Իմ գունդը հետապնդելով թշնամուն մոտենում էր Դնեպրին: Նոր էի մտնում մի գյուղ, որ գտնվում է գետի այս ափին, որ հրաման ստացա իսկույն անցնել գետը և պլացդարմ ստեղծել դիմացի ափին:

— Իսկ կամուրջ, փոխադրանավեր ունեի՞ք:

— Ի՞նչ կամուրջ, ի՞նչ փոխադրանավ,— ժպտում է կոմիկորեն Միքայելյանը,— դրանք դեռ նոր կգային հետևյալ օրերը:

— Իսկ ինչո՞վ պիտի անցնեիք գետը:

— Ինչով որ ուզում ես… Հրամանը եկավ՝ պետք է կատարես… պարզ է, պետք էր մակույկներ գտնել և անցնել:

— Իսկ եթե չգտնեի՞ք:

— Թեկուզ լողալով… Հրամանը պարզ է և որոշ… Ես թողի գունդը և երեք մարդ վերցնելով առաջ ընկա անվերջանալի մի գյուղի միջով դեպի գետափը: Հասա, բայց գունդը երկար ժամանակ չէր երևում: Հետիս մարդկանց մեկ-մեկ հետ ուղարկեցի, որ գնան և կապվեն գնդի հետ: Գուցե գունդը գնացել է ուրիշ ուղղությամբ: Նրանք գնացին, ես մնացի մենակ: Տեղը վտանգավոր էր, որովհետև գերմանացիները դեռ լիովին չէին անցել գետը, ափըվխտում էին ամեն տեսակ մարդիկ: Տեսնեմ՝ մի մարդ երկու մակույկ է բերում վերևից: Բերեց կապեց ափին: Մոտեցա,— «ի՞նչ մակույկներ են, ո՞ւմն են»: «Իմն են, բերել եմ ոստիկանի հրամանով, որ անց կենա գետը, գնա գերմանացիների մոտ»:— «Ի՞նչ ազգից է ոստիկանը».— «Ուկրաինացի»: Ատրճանակը հանել էի արդեն: Ասացի՝ «եթե սուտ ասած լինես, մի ուրիշ բան պատահի, առաջինը դու կգնդակահարվես»— «Ինչպես կամենաս»,— ասում է շատ հանգիստ մակույկատերը, որ ուկրաինացի էր նույնպես: «Ինչո՞ւ կատարեցիր այդ ոստիկանի հրամանը և մակույկ բերիր, եթե լավ մարդ ես դու, վերջապես ի՞նչ մարդ է այդ ոստիկանը»— հարցնում եմ ես:— «Նա լավ ոստիկան է»:— «Ապա ինչո՞ւ է անցնում մյուս ափը»: Այսպես խոսելով սպասում եմ գնդիս, որ չի երևում, թեև շատ ժամանակ է անցել, մյուս կողմից չեմ կարողանում պարզել, ինչ մարդ է սա, ինչ մակույկներ են և ով պիտի երևա մի փոքր հետո, ոստիկան՝ թե՞ գերմանացիներ և եթե ոստիկան է՝ ինչ մարդ է: Գուցե այս ամենը սուտ է և, դարան… Մարդն ասում է, որ ահա քիչ հեռու իմ տունն է, կինս երեխաներս, գնանք այնտեղ սպասենք, գուցե այնտեղ գա ոստիկանը և եթե սուտ դուրս գամ՝ սպանիր կնոջս ու երեխաներիս:— Այ քեզ նոր հանելուկ: Մակույկները թաքցնում ենք ուռենիների տակ և գնում մոտակա տունը: Կինը, երեխաները լաց են լինում, ես ու մարդն էլ կանգնած ենք, ես ատրճանակը ձեռիս: Հնար չունեմ հասկանալու, ստուգելու

վիճակս, ճշմարիտն իմանալու, թե ինչ մարդիկ են դրանք: Մարդն ասում է. «Թողեք գնամ ոստիկանին բերեմ, եթե սուտ դուրս գամ կամ մի բան պատահի՝ սպանեցեք կնոջս ու երեխաներիս»: Հիմա էլ նոր հանելուկ… Համաձայնեցի, նա գնաց, ես էլ հանգստացրի «պատանիներին», որ իրոք եթե մարդը ճշմարիտն է խոսել՝ նրանք թող ինձանից երկյուղ չունենան: Բայց մյուս կողմից՝ ես մտել եմ տունը, իմ գունդը գալիս է գուցե ինձ է որոնում: Ոչ մի ծպտուն: Գունդը չկա: Եկավ մարդը ոստիկանի հետ:— «Ի՞նչ մարդ ես»:— «Ոստիկան գերմանական ծառայության մեջ»:— «Ո՞ւր էիր գնում մյուս ափը»:— «Գնում էի տեսնվելու պարտիզանների հետ»: Հիմա էլ նոր հանելուկ… «Բայց գիտե՞ս, որ ես կարող եմ քեզ իսկույն գնդակահարել՝ եթե սուտդուրս գաս, և ինչպես երևում է պետք է գնդակահարեմ»:— «Օգուտ չկա դրանում, դուք կվնասեք գործին»… Տագնապալի դրությունը շարունակվում է… Ո՞րտեղ եմ ես, ովքե՞ր են սրանք, ո՞ւր է գունդս, գյուղում, մոտիկ ափերում գերմանացիներ խառն մերոնց հետ, եթե գան շրջապատեն ինձ… Մի խոսքով չգիտեմ ինչով կվերջանա: Հանկարծ լսում եմ ազգանունս. կանչում են «Ընկեր Միքայելյան»: Դուրս եկա իսկույն, տասը ավտոմատավորներ իմ գնդից առաջ են եկել՝ ինչպես ես հրամայել էի հետ ուղարկած իմ մարդկանց: Դրությունը փոխվեց, հիմա ես ապահով էի, բայց ոստիկանի հանելուկը մնում է անլուծելի… Չուզելով այլևս ժամանակ կորցնել՝ ոստիկանին երկու ավտոմատավորների հետ ուղարկեցի գյուղ, որ մի քսան տնվորի հարցնեն, թե ինչ մարդ է նա: Այդպես էլ արել էին: Բոլոր գյուղացիները վստահելի վկայություններ էին տվել նրա մասին, թե որքան օգնություններ է ցույց տվել գյուղացիներին և որ նա իրոք կապ ունի պարտիզանների հետ: Ոստիկանին հանձնեցի հետագա ստուգման և ինքս շտապեցի գետափ: Երկու մակույկին ավելացան նաև երեք մակույկ և ահա մեր փոխադրական այդ «բազայով» մենք սկսեցինք գետանցումը: Գերմանացիներն անշուշտ կսպասեին, որ մենք գետանցումը կսկսենք կլասիկորեն: Այսինքն մի երկու օր հետո կգան սակրավորները պոնտոններ անցկացնելու, իրանք էլ աջ ափից կռմբակոծեն, մենք կջարդվենք, ու գետի աջ ափը կդառնա ամուր պաշտպանության գիծ: Բայց շաբաթը շուտ եկավ քան ուրբաթը: Մենք պրիմիտիվ մակույկներով քիչ-քիչ անցանք աջ ափը, հենակետեր ստեղծեցինք և հետզհետե ողջ գունդը անց կացավ գետը և հաստատվեց աջ ափին: Պլացդարմը ստեղծված էր անսպասելի, հանդուգն և արագ շարժումով: Մեզ հետ միասին անց կացան նաև հարևան գնդերը, հետո կամուրջներ ձգվեցին և գետանցումը դառավ մասսայական:

…Երբ գետանցողներս հավաքված էինք մեր շքանշաններն ստանալու՝ ուրախության ընդհանուր խոսքերի մեջ մեզ հրաման ուղարկողն ասաց.

— Պարտք եմ համարում հայտնել ձեզ, որ հույս չունեի այլևս ձեզ տեսնելու…

Նա այս ասաց հուզված և ջերմ համբուրեց մեզ… Այո, հերոսներ նրանք են, ովքեր անցնում են մահից այն կողմ…

Հերոսը պատմեց այս ամենահասարակ տոնով, իբրև մի սովորական զբոսանքի պատմություն: Բայց երբ խորանում ես այն հանդուգն, ուղիղ մահվան երախը գնացող սխրագործության նշանակության մեջ՝ նոր ես հասկանում, թե ինչ է հերոսությունը:

Սովետական Միության հերոս Գեդեոն Միքայելյանը հազվագյուտ անձնվիրություն է արել, ցույց է տվել և՛ հնարամտություն և՛ անձնական քաջություն, իր մարտիկների հետ բաժանելով ստույգ մահվան վտանգները այդ աննախընթաց գետանցման, Դնեպրի աջափնյա պլացդարմի ստեղծման հերոսական գործում:

Ես սիրում եմ նրա համեստ, ուրախ և հասարակ բնավորությունը, նա պատանեկությունից սկսած մինչև այս հասակը անց է կացրել իր կյանքը զինվորական գործում: Եղել է Հայկական դիվիզիայում, մեծ երախտիք ունի այս միավորումների զինվորական գործի, քաղաքական զինվորական կրթության աշխատանքի մեջ: Մենք հաճախ ենք խոսում գրականության, երաժշտության, նկարչության և այլ կուլտուրական բնագավառի տարբեր խնդիրների մասին: Նա լավ գիտե հայ գրականությունը, թե՛ հին, թե՛ նոր, սիրում է ընթերցանություն և զրույց մեր կյանքի մասին:

Նա սիրում է մեր ժողովուրդը ոչ հեռավոր ու այլ «բարձր» դիրքերից: Ոչ, նա ինքը ժողովրդի ծոցից, հոգսերով ու կյանքի դառն փորձերով կոփված մարդ է: Նա ինքը հենց մեր ժողովրդի բեկորն է, նույն արյունից և ոսկորից: Նա գիտակից, զգոն պարտիական է և ճշմարիտ հայրենասեր:

Մեր պատանիներն ու երիտասարդները շատ ու շատ բան ունեն սովորելու Սովետական Միության հերոս, փոխգնդապետ Գեդեոն Միքայելյանից, որի կյանքն ու գործը, խոսքն ու գործը, սերն ու գործը մեկ են, ինչպես որ ինքը մեկ է ժողովրդի հետ— նրա հարազատ, անձնվեր զավակը:

ՄԱՀԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

(Էջ 176)

Առաջին անգամ տպագրվել է ՍՀ, 1944, № 140. ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Այս ակնարկի մասին Սովետական Միության հերոս Գեդեոն Միքայելյանը պատմում է հետևյալը. «Մահից այն կողմ» ակնարկը գրվել է 1944 թ. հուլիսին:

Կոնտուզիայի և հիվանդության պատճառով ինձ արձակուրդ էին տվել, եկա Երևան, այստեղ նորից հիվանդացա և պառկեցի հիվանդանոց, որտեղ էր նաև Դեմիրճյանը:

Մի քանի օր հիվանդանոցում համատեղ անցկացնելուց հետո, ինձ տվին «Սովետական Հայաստան» թերթը, ցույց տալով այս ակնարկը: Կարդալով այն, դիմեցի հեղինակին, թե ինչպե՞ս է այս բոլորը գրել, երբ ես ռազմաճակատի մասին գրեթե բան չեմ պատմել: Նա ժպտաց և ասաց. «Ես տառապում եմ անքնությունից, բայց դուք էլ քնած «անքուն եք», քանի որ ամբողջը քաղել եմ ձեր «քնած» և իմ անքուն գիշերներում»: